

**ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ**

Բանկի կողմից տրամադրված կամ տրամադրվելիք վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է համաձայն «Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ» Կանոնակարգ 8/01-ով սահմանված կարգի: Վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար հիմք է ընդունվում «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^N \frac{Kn}{(1+i)^{\frac{Dn}{365}}}$$

որտեղ՝

**i** - տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը հաճախորդի վարկավորման ընդհանուր ծախսն է՝ արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսադրույքով, և որն իր մեջ ներառում է բոլոր տեսակի տոկոսներն ու այլ վճարումները, որոնք հաճախորդը պարտավոր է վճարել վարկի ստացման և վարկի գործողության ամբողջ ընթացքում:

**A** - հաճախորդին տրամադրվող վարկի պայմանագրային գումարն է,

**n** - հաճախորդի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համարն է: Ընդ որում, մեկ օրվա ընթացքում վարկի մայր գումարի, տոկոսագումարների և (կամ) այլ վճարումների կատարումը համարվում է մեկ վճարում:

**N** - վարկի մարմանը (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի համարն է (ներառյալ նաև վարկի ստացման պահին կատարվող վճարը), որից հետո հաճախորդի կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները համարվում են մարված:

**Kn** - հաճախորդի կողմից մինչև վարկի ստացման պահը, վարկի ստացման պահին և (կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ):

**Dn** - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառվող այլ վճարները ներառում են հաճախորդի կողմից վարկի ստացման համար պարտադիր կատարման ենթակա վճարները համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ» Կանոնակարգ 8/01-ի:

Արտարժույթով տրամադրվող վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի ժամանակ վարկի գումարը փոխարկվում է դրամի, իսկ որպես փոխարկման փոխարժեք հիմք է ընդունվում ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված արտարժույթի փոխարժեքը: Վարկի փաստացի մարումների ժամանակ հիմք ընդունվող փոխարժեքը կարող է տարբերվել փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ հիմք ընդունված փոխարժեքից:

### Ամսական հավասարաչափ (անուփոփոխային) մարումների դեպքում վարկի մարումները հաշվարկվում են հետևյալ բանաձևի համաձայն՝

$$R = P \times r / (1 - 1/(1 + r)^n),$$

որտեղ՝

**R** - ամսական վճարման չափն է,

**P** - հաճախորդին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է,

**r** – վարկի ամսական տոկոսադրույքը (վարկային պայմանագրով սահմանված տարեկան անվանական տոկոսադրույքի 1/12 մասը)

**n** – վարկի ամբողջ ժամանակահատվածի համար վարկի մարմանն ուղղված վճարումների ընդհանուր թիվն է (ամիսների քանակը):

### Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակներ

#### Օրինակ 1

Վարկատեսակ՝ Գրավով ապահովված սպառողական վարկ

Վարկի գումար՝ 10,000,000 ՀՀ դրամ

Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 15%

Տոկոսադրույքի տեսակը՝ հաստատուն

Վարկի ժամկետ՝ 72 ամիս

Մարման եղանակ՝ անուփոփոխային /վարկի գումարի և տոկոսագումարի ամսական հավասարաչափ վճարումներ/

Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 200,000 ՀՀ դրամ

Անշարժ գույքի գնահատման վճար՝ 10,000 ՀՀ դրամ

Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի վճար՝ 10,000 ՀՀ դրամ

Գրավի պայմանագրի նոտարական վավերացման վճար՝ 15,000 ՀՀ դրամ

Գրավի իրավունքի պետական գրանցման վճար՝ 26,000 ՀՀ դրամ

***Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 17.27 %***

### **Օրինակ 2**

Վարկատեսակ՝ Արագ սպառողական վարկ

Վարկի գումար՝ 2,000,000 ՀՀ դրամ

Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 18%

Տոկոսադրույքի տեսակը՝ հաստատուն

Վարկի ժամկետ՝ 48 ամիս

Մարման եղանակ՝ անուիտետային /վարկի գումարի և տոկոսագումարի ամսական հավասարաչափ վճարումներ /

Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 66,000 ՀՀ դրամ

***Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 21.84 %***